



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՆՈՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՄՆԵՐՈՐԴԻ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՆՈՆԻԱ ՇԱՐԱԹ 11 04 ՌՍՏՈՍ 1873

ԹԻԻ 968

ԵՐԵՄՆԵՐՈՐԴԻ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻԴԱՐԶ
ԱՐՇԱԼՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Ներկայ թուովս Արշալոյսն իւր 34 երորդ տարին կրմունէ : Այս բարեպատեհ առթիւ մեր անկեղծ երախտագիտութեան հաւաստիքն յայտնելով այն ամեն ազգասիրաց՝ որք վեհանձնաբար նպաստամատոյց եղեն լրագրոյս անընդհատ հրատարակութեանն մինչև ցայսօր, լի եմք յուսով թէ պիտի բարեհաճին շարունակել զհայրենասիրական ձեռնառութիւն և զհամակրական խնամն իւրեանց . որոց արժէքն մեծ են և կենսական :

Արարատեան Արշալոյսն թէև ազգային միւս լրագրաց առաւելութիւններն չունի, բայց գուցէ կրնայ պարծիլ իւր անդրանկութեամբն և իւր երկայնակեցութեամբն, ինչպէս նաև իբրև ազգային միակ գործի հաղորդակցութեան թուրքիոյ Հայոց ընդ հայաբնակ յոյժ հեռաւոր երկիրս :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ թագաւորական ցեղին երէց ճիւղին և կրասեր ճիւղին մէջ հաշտութիւն և միասնութիւն եղև . փարիզի կոմսն, որ Լուի-Ֆիլիպի թագաւորին թոռն է, յատկապէս ի վէճնա երթալով այցելութիւն ըրաւ Շանսօրի կոմսին,

որ երէց կամ օրինաւոր ճիւղին յաջորդն է, և նորա՝ Գաղղիոյ թագաւորական գահուն վերայ ունեցած իրաւունքն ճանչցաւ . առեւ է թէ Օրլէանեան և օրինաւորական կուսակցութիւններն կատարելապէս միաւորուած են այժմ . որով Գաղղիոյ մէջ թագաւորական կառավարութեան վերանորոգութիւնն կերպիւ իւրիւր կըրպարանայ :

Այս երկրին երեսփոխանական խորհրդանոցէն հարիւր անդրալեռնական անդամք՝ յանցեւորձն Հռոմի քահանայապետին ուղերձ մի մատուցած էին, որով իրենց անձնանուէր ըզդայմունքն կը յայտնէին Ն . Սրբաշնութեանն, բարեմաղթելով որ իւր քաղաքական իշխանութիւնն վերանորոգուի և այլն : Սրբազան Պապն այժմ նոյն ուղերձին պատասխանելով կը հաւատատէ, թէ ինքն երբեք չերկրայեցաւ որ արդարութեան արեգակն վերստին պիտի ծագէր Գաղղիոյ մէջ և կը յաւելցնէ թէ սուրբ կոյս Աստուածածինն իրեն համար թագաւորութիւն մի կը վերաստատէ ի Գաղղիա, թէ ուխտագնացութիւնն հրեշտակաց և մարդոց արժանի տեսարան մի են, իւր խնդակցութիւնն կը յայտնէ երեսփոխանաց և հասարակապետական կառավարութեանն ի մասին բարեպաշտ զգացմանց իւրոց, և վերջապէս Պապն կը գուշակէ զմտաւոր վախճանն մարդական իշխանութեան, և բարեմաղթութիւններ կընէ վասն վերանորոգութեան փառաց և մեծութեանն Գաղղիոյ :

Որովհետև հրատարակեցաւ թէ Գաղղիոյ կառավարութեան քաղաքականութիւնն պաշտպան և օգնական կը հանդիսանայ Պապին, քաղաքականութիւնն յորմէ ծանր հետեանք կրնան ծագիլ, Հասարակապետութեան նախագահ Մաք—Մահօն մարաշխոսն փութացաւ պաշտօնական կերպիւ յայտնելու թէ, թէև ինքն կը յարգէ զՊապն, սակայն ճշդիւ և անփոփոխ կերպիւ պիտի հետեւի իտալիոյ նկատմամբ, մի և

ոյն քաղաքականութեան, զոր իւր նախորդն մօտիւ թիէր գծած է :

Անգղիոյ կառավարութիւնն և ժողովուրդն մեծապէս ուրախ են Ռուսիոյ հզօր տէրութեան կայսերական գերդաստանին հետ եղած խնամական նոր ազգակցութեան վերայ : Բարլամէնթն յօժարամիտ ընդունեցաւ կառավարութեան առաջարկութիւնն վասն յաւելցնելոյ 10,000 լիւա ի վերայ տարեկան խոշակին խոխուրդի դրսին, իւր մօտաւոր ամուսնութեան առթիւ ընդ Մեծ—Գրսուհին Մարիամ, միակ դուստր օգոստա . կայսեր Ռուսիոյ : Այս յաւելուածով յիշեալ արքայազուն իշխանին տարեկան թուշակն 25000 լիւայի կը հասնի : Բաց յայսմանէ բարլամէնթն 6000 լիւա տարեկան հասոյթ ուրոյց և ապահովեց վասն կայսերազուն Մեծ—Գրսուհւոյն ի դիպուածի մահուան իւր լծակից իշխանին :

Խախտուրդի դուքսն չորրորդ գաւախն և երկրորդ ուստրն է վիքթորիա թագուհւոյն, և ծնեալ յամին 1844 իսկ բարձրաւ Մարիամ Մեծ—Գրսուհին, որ ծնեալ է յամին 1853 չորրորդ գաւախն և միակ դուստրն է Չարին : Կրկնեմք, այս ամուսնութիւնն խիստ հաճելի եղաւ Անգլիացւոց, մանաւանդ այժմեան պապարագայից մէջ, և կարի իրաւամբ քանդի ի թէ տէրութեանց բարդն ի ժամանակիս յայսմին կախուած չունի իշխանական ամուսնութիւններէ, տակայն չափազանց է մտածելն թէ թագաւորական գերդաստանաց խնամական միաւորութիւնն որևէ ազդեցութիւն չեն ունենար ի վերայ բարեկամական յարաբերութեց վեհապետաց և երբեմն իրենց ինչ ինչ որոշմանց վերայ : Այժմեան պարագայիս մէջ, որ խնդիրն օգոստա . Ալէքսանդր կայսեր միակ դստեր կը վերաբերի, անկարելի է որ նորա ամուսնութիւնն ընդ անգղիացի արքայազուն իշխանին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Ի ԳԵՏՆ ԶՈՐՈՒ

Ես մոլորեալ յիմ հայրենեաց եկի առ քեզ տիրազգեաց,
Կայ յո՞ղիմես քայլամուր քոց հարազատ ի յափանց :
Թէ մտանեմ ի՞նչ քոյին դարեալ ձգես զիս ի ծով,
Թէ աստ չըջեմ ընդ քեզ խօսիմ անցեալ գնաս հեծելով :
Աւա՛ղ ձորոս, այլ ո՛չ յիշես քո հարազատ սիրելիս,
Խոխով հանեալ փութաս փութաս հոսես յաշաղգ գող լալիս :
Հանգի՛ր ձորոս, ըզքեզ կոչեմ հայեանց առիտ նազելի,
Անձնտոչոր ես ի վաղուց ի տես, ի սէրդ տարփայլի :
Ծագիկ դալար ածեալ բերեմ նարօտ նարօտ անհրման,
Եւ իմ ձեռամբ յիմ հայրենեաց քաղեալ բերեմ քեզ շուշան :
Լաւաց կարիա՛ջ հզօր գետոյն, լի՛ բնութիւնն համօրին,
Ըզձայն մեղմիկ այն եղկելին եհան լալով ի սրտին :
Առ ի՞նչ շուշան առ ի՞նչ ծագիկ, այրի եմ ես սգաւոր,
Օ՛ն անդր յինչն հրճուանք և փառք, ինձ քոզ բաժին սեւաթոյր :
Ո՛ր փառաւոր թագապետիք իմ Արամեան գահայոյց,
Ո՛ր հայկազանց սուրբ հայրապետք պարգեւարեք ի յերկնից :
Ո՛ր ճոխազարդ Սմբատաւան հալածելոց տպաստան,
Կործանեցաւ անհետացաւ եղև Հայոց գերեզման :
Բարձան որդիք իմ հորազատք, փոխան նոցա առելիք,
Սուսեր ընդ մէջ աստ առ տախտակ խոյտան բերկրին երջանիկ :
Ի՞ գալ զարնան ծաղիկուք փթթեալ գերեստ դաշտին զարդարեն,
Եւ սոխակաց տեսեալ զվարդ՝ անուշ ձայնիւ գեղգեղեն :
Սակայն վասն իմ չիք արդ դարուն, ո՛չ եղանակ զովորար,
Բնութիւնն ամեն ինձ երկի ի սուգ պատեալ և խաւար :
Զայս նա տապ և լալաղին կարիա՛ջ հանեալ յատակին,
Եւ ճեպ ընդ ճեպ հորդան տուեալ գնաց հանց յաշխարհ :

ՀԱՌԱՉԱՆՔ ԳԱԳԻԱՅ ՎԵՐՋՆՈՅ

Բայան դրունք գարնանայինք, հնչէր զեփիւռ զովորար,
Յիշատակօք իմ հայրենեաց ես ծփայի վեր ի վայր :
Երբ ճեմ առեալ անցանէի առ խամրոցան Կիզիսարայ,
Ձիւնչ տեսնեմ, գիտի կախեալ զպարօսպան ի րուցայ :
Աչք իմ անշարժ ի նա յառեն, և իմ աղիք գալարին,
Շուշանագեղ էր պատանին, դիմօք անեղծ տակաւին :
Չեւ էր հանեալ ըզլունչ վերջին, ինքն ընդ անձին ողորէր,
Եւ կարեմէր նա խոցոտեալ կական բարձեալ հառաչէր :
Մերձեալ անդէն ձայնեմ առ նա . տուր ինձ ասեմ պատասխան,
Դու ո՞րիցս տարաբաղդիկ, ձեռ քո բեր ինձ յերեան :
— Գաղիկն եմ ես, ձայն ետ անդէն, խոր հառաչեաց ի սրտէ,
Գաղիկն եմ ես տարաբաստիկ Բագրատունեաց ի դարմէ :
Ա՛հ, էր երբեմն իբրև գաւախ ես սիգալով ձեմէի,
Եւ զօրութիւն գոռ թշնամոյն տապաստ յերկիր առնէի :
Ես քանի՞օն մարտ մղեցի զէմ յունական բանակին,
Կործան յերկիր արկի զօտարն առ Հրազտան գետակին :
Սակայն չլուայ ես ձեռնհաս ջընջել զթոյն դառնութեան,
Նախարարաց բառեալ սրտէն զախտ ոխերիմ դաւաճան :
Ահա՛ նորա ինձ այս բաժակ լի դառնութեամբ արբուցին,
Յիմ ցանկալի ի հայրենեաց զիս տարազէր արարին :
Վառեալ նորա ի սէր սնոտի և անցաւոր մեծութեան,
Ըզմարդարիտ իւրեանց անդին ի ծով արկին կորստեան :
Հատին զծառն բազմասաղարթ ի բաց յինքեանց ընկեցին,
Որք ընդ նովաւ նստեալ անդորր զօք ծըծէին զովագին :
Զայս նա տապ և յերաշխեպ մահուն հեծէր ցաւաղին,
Յուսոյն վերայ եղ ըզլունչն, թեաւ գնաց ի յերկին :

Աւակերտ չորրորդ գոստատան ազգային
հոգեւոր զպրոյն Հայոց Արցախու,
Ի Շուշի, 5 Ապրիլ 1873 :

Յովնանեն Բեկլուբեկեանց :

ապացոյց մի չլինի ոչ միայն բարեյաջող համա-
ձայնութեան 'ի մէջ երկուց վեհապետական
դերձատանաց, այլև յայտնի նշան մըն է մի-
խառնած յոժարամիտ արամագրութեանց առ-
'ի հեռանալ 'ի քաղաքական արամագրութեանց,
որք կրնան խռովել զխաղաղութիւնն :

Սպանիոյ մէջ թէպէտև ապստամբական խռո-
ւթութիւնն կը շարունակուի, սակայն հատարակա-
կապետական զօրաբանակն քանի մը նշանաւոր
յաղթութիւններ ըրաւ ֆարբանան զօրաց վե-
րայ : Կարթագենէի ապստամբներն զսպուեցան
և ուրիշ քանի մը խռովայող քաղաքներ անձ-
նատուր եղան :

Պարսից Շահն երկուշաբթի օրն՝ օսմանեան
փոքրիկ նաւատորմիցով մի, հասաւ 'ի Կ. Պօլիս,
որ փառաւոր պատուով ընդունուեցաւ :

Բարձրագոյն Դրան հրամանաւ 'ի Կ. Պօլիս
հրատարակեալ հետեւեալ օրադրներն դադա-
րեցան՝ կայսերական քաղաքականութեան ար-
դար և խոհական սկզբանց հակառակ՝ անտեղի
յօդուածներ հրատարակելուն պատճառաւ :

1. Անդդիական Լեւիւնի Հիւսէյն օրագիրը երկու
ամսուան համար դադարեցաւ :
2. Ան-Խիւ անուն լրագիրը՝ որ յունարէն տա-
ռետիւթ թուրքերէն լեզուաւ կը հրատարակուէր,
բոլորովին խափանուեցաւ :
3. Պուրլարէն Թուրքիա կոչուած լրագիրը բո-
լորովին խափանուեցաւ :
4. Սեփաի Հափաի անուն լրագիրը՝ որ հայերէն
տառերով թուրքերէն լեզուաւ կը հրատարակ-
ուէր, բոլորովին խափանուեցաւ :
5. Բոնաֆաիլ-Բոնի կոչուած յունարէն լրա-
գիրն դադարեցաւ՝ Ռուսիոյ կայսերական կա-
ռավարութեան դէմ լի զրպարտանք յօդուած
մի հրատարակելուն պատճառաւ :

Ալշաւայ նախնթաց թուով ծանուցինք թէ
մեծաշուք Շէրձէր գիտնական սեպուհն պատ-
ուական գիրք մի շարադրած է Զմիւռնիոյ վե-
րայ, զոր կրնամք անուանել ստորագրութիւն
Այալնի նահանգին :

Այս պատուական աշխատարկութիւն բնագիրը
տակաւին ձեռքերնիս չանցաւ, բայց Թրեւսի
յունարէն լրագիրն Իմրա կոչուած՝ նոյն աշխա-
տարկութեան քանի մը յօդուածներ թարգ-
մանած և հրատարակած է. ուստի մեք ևս
յունարէնէն թարգմանելով՝ մեր աղբիւրն վերա-
բերեալ հետեւեալ տեղեկութիւններն կը հաղոր-
դեմք լրագրոյս ընթերցողաց :

«Հայոց ազգային յատկութիւնն չզարգացան
և անխառն չարհուեցան որպէս Յունաց ազ-
գային յատկութիւնն. և այս՝ ըստ մասին այն
պատճառաւ որ սակաւաթիւ են և անկախ հայ-
րենիք չունին 'ի ներքին նոցա քաղաքային ըզ-
գացում մի. և ըստ մասին վառելի վարուք և
սովորութեամբ խառնակեցան թուրքաց հետ և
սովորեցան զթուրքերէն լեզուն՝ մոռանալով
շատ անգամ՝ իրենցը : Այս պատճառաւ և
թուրքերն՝ այսինքն տաճիկներն նախամեծար
կը համարին զյարաբերութիւնն Հայոց հետ, որք
կերպիւ իւր կը շարժուան զնոսա ուրիշ օտար
ազգաց հետ : Ըստ մարմնոյ՝ Հայք ծանր և
դժուարաշարժ են ըստ օրինակի թուրքաց, այլ
անոնցմէ յոյժ աւելի խորագէտ և յաջողակ են :
Նախապատիւ կը համարին սեղանաւորական և
առեւտրական գործքով զբաղիլ. սակայն ամե-
նայն յաջողութեամբ 'ի գործ կը զննեն նաեւ
ուրիշ արուեստներ, և յօժարամիտ են խա-
նութեան լինելու այսինքն (մանրամասնաւ) : Հայ
նաւաստի չկայ՝ այլ ընդհանրապէս քաջ երկ-
րագործ են : Իլմիլի մէջ հարուստ հայք չեն-
զանազանուիր եւրոպացիներէն. բայց նահան-
գին ներքին կողմերը շատ անգամ հաղիւ թէ
կը տարբերին 'ի թուրքաց : Ի վերջին ժամա-
նակս Հայք սկսան վեհանախական ջանքեր աշ-
խատիլ տաճիկական աղբիւրութիւնն և սովորու-
թիւնն թող տալու. և այս բանին մէջ երեւելի
կը հանդիսանան կանայք : Դպրատուններ և ու-
րիշ ազգային արտաւական հաստատութիւններ
ունին : Ոմանք 'ի Հայոց կաթողիկ են. բայց

խիտ մեծագոյն մասն կը վերաբերին իրենց ազ-
գային եկեղեցւոյն : Օտարագոյնք գրեթէ ոչ
երբեք կուսանին զՀայոց լեզուն. բայց Հայք
կըխօսին շատ օտար լեզուներ» :

Մօսկ Շէրձէր սեպուհն Իլմիլի Հայոց թիւը
6000 կը նշանակէ. իսկ Այալնի վերայէն Հայ
ընակչաց համար՝ 40.000 հոգի են կըսէ :

ԱԶԳԱՅԻՆ

Ահաւասիկ Մաշխոսի ազգային դպրոցին
յառաջադիմութեան վրայօք մեզ յուղարկուած
նամակը, զորմէ յիշատակութիւն ըրած եմք
մեր նախնթաց թուոյն մէջ :

Յարգոյ խմբագիր,

Մօսկոյ Մաշխոս երթալով՝ առիթ ունեցայ տեղ-
ւոյն Գոյիանեանց վարժարանը այցելել : Այս դպրոցը
գրեթէ ասկէ երկու տարի առաջ, երբ ազգասէր երի-
տասարդներ հիմնեցին, որք են պարոնայք

Գլորգ Սերտարեան,

Գրիգոր Բարազեան,

Տրդատ Պալեան :

Ստուգիւ մեծ յանդիմութիւն մ'էր տալիս ձեռնա-
կը, սակայն սորա վստահ ըլլալով՝ որ նկուս և տարա-
բաղդ ազգերնիս՝ տգիտութեան անուրէն փրկելու միակ
միջոցը դաստիարակութեամբ կարող ենք ձեռք բերել,
մանաւորդ իդական սեռին, ամեն խոշորագոյն առաքուր
կոխելով՝ վերջապէս յաջողեցան իրենց տնօրինութեան
ներքեւ անկախ վարժարան մի հաստատել սոսկ իդական
սեռին յատկացեալ : Մեզ տրուած տեղեկութեանց հա-
մամտ այժմ 60—70ի չափ աշակերտուհի կը դաստիա-
րակուին հոն և ունին մէկ վարժուհի և վարժապետ մը :
Անոնցմէ զատ են, ընթերցանութիւն, գեղա-
գրութիւն, ազգային և սրբազան պատմութիւն, քերա-
կանութիւն, ասեղնագործութիւն և ուրիշ մի քանի օգ-
տակար դասեր :

Վերջիջեալ աշխոյժ երիտասարդները նիթապէս
աշակից ունենալով մի քանի ազգասէր անձինք, կրցին
դոյզն ժամանակի մէջ վարժարանը զգալի կերպիւ յա-
ռաջացնել, և այս տարի ալ հարցաբնութենէն վերջը,
որ անցեալները Թեղի ունեցեր է, աշակերտաց ամսեայ
արձակման պատճառաւ, փոքրիկ հանգէս մ'եղեր է :
Հաստատեցին մեզ թէ՝ հանգէսը թէև սլորդ՝ սակայն
խիտ չքեղ և գոզորիկ կերպիւ կատարուէր է : Մաշ-
խոսի Միւթիսարեֆը, ինչպէս նաեւ տեղւոյն երեւոյի
անձինք ամեն ազգերէ ներկայ են եղեր. աշակերտք մի
քանի ճառեր կարդալ և ազգային երգեր երգել ետքը
բարոյական զանգու մ'ալ ներկայացուցեր են : Հանդի-
սականք իրենց գոհունակութիւնը ցուցանելով վարժա-
րանին տնօրինութեան, զորմանքնիւ ալ կը յայտնեն
դպրոցին այս աստիճան յառաջադիմութեան համար :

Սոյն տողերը, ինչպէս մեզ, ապահով ենք ամեն ազ-
գայնոց ուրախութիւն պիտի պատճառեն. արդարեւ Մաշ-
խոսի պէս ուսմիկ ժողովրդեան մը մէջ, գեղեցիկ սեռին
համար վարժարան հաստատելը, երկու տարի անընդհատ
շարունակելը, զգալի կերպիւ յառաջացնելը և ապագա-
յին համար մեծամեծ յոյսեր տալը, դիւրին կամ թերեւ
փանաքի բան մը չէ. կերեակայենք վերջիջեալ ազնիւ
պարոններուն կրած աստիճանի աշխատանքը և ըրած
մեծամեծ գոհութիւններին. ուստի մեր խորհին շնոր-
հակալութիւնը հրապարակաւ մատուցանելով պատ-
ուարժան տնօրէնութեան, կը խնդրենք որ հաճին շարու-
նակել այս ազգագոյն շաղկին մէջ յոյսու աղբիւն և 'ի
փառս անուանի իւրոց : Աւերող չենք համարիր նաեւ ը-
սել, որ եթէ ձեռնահաս ազգայինք գէթ նիւթապէս ա-
ջակցելով տնօրինութեան՝ քաջալերեն զինքը, աներկ-
միտ ենք որ դպրոցին վիճակը քիչ ժամանակուան մէջ
աւելի բարձր դրից կը վերածի :

Ստուգեցինք նաեւ թէ Մաշխոսի երեւի և պատ-
ուար ազգայիններէ մեծա. Գոսպար էֆէնտի Բա-
րազեանը, տեղւոյն եկեղեցիին զանգակատուն մի շինել
կուտայ, իւր անձնական քսակէն 3000 ոսկոյ չափ ծախս
ընելով. այն բարեպաշտ էֆէնտին, տեղւոյն ազգային
դպրոցը, որուն շէնքը խարխուլ վիճակի մը մէջ կը գտ-
նուի 'ի հիմանք քանդել տալով վերստին փառաւոր կեր-
պիւ շինել տալու մտադիր է եղեր : Մենք այս ազգասէր
էֆէնտինն ազնիւ և վստահ զգացմանց ծանօթ ըլլալով՝
ապահով ենք որ մօտեւս կը ձեռնարկէ այս Մեծ գոր-
ծին ալ, և Հայ մանկուոյն միտքը մշակելու համար,
պէտք եղած որքանը պատրաստելով՝ իւր անու նը տնտիս
կըթողու պատմութեան և չեղուն մէջ :

Խնդրելով, յարգոյ խմբագիր, որ բարեհաճիք օղի
ազգասիրական գրութիւնն ձեր պատուական լրագրոյն
միջոցաւ հրատարակել, Մնամ յարգանք ձերը

Զմիւռնիա, 25 Յուլիս 1873 :

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՅԹԱԿԱՆԱԿԱՆ ԽՈՌՈՎԱԹԻՒՆԻՔ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Յիշեալ մայրաքաղաքին ազգային քաղաքական ժո-
ղովն անցեալ շաբթու երկու խոփայող և խոտնալիթ
նիստեր ըրաւ, և զՊատրիարքարանն ծանր անկարգու-
թեանց, փոխադարձ զանակոծութեանց և խոյտառա-
կութեանց տեսարան դարձուց 'ի մեծ վնաս պատուոյ
ազգային Կեդրոնական վարչութեան. որոյ համարուեալ
բոլորովին անհետացաւ զաւանակաւ Հայոց տոջն և
Լատինոս Նայելով յիշեալ ժողովոյն երկու դիման ան-
դամոց մէկն՝ այն է Փափազեան պարոն Ստեփան : Պատ-
րիարքարանին արտաքնոյր պահուրտելով ժողովրդեան
գանակոծութենէն ազատեր է. իսկ միւսն՝ այն է պարոն
Քրիստոստուր Ղազարոսեան՝ իւր տաշտոնական կեր-
պարներէն վերայ չափէն անելի վստահելով՝ ժողովարա-
նէն փախչիլ չէ ուզեր իւր միւս անդամակցացը հետ,
հետեւաբար Սամաթիայի բաղձութիւնն զնա բռնելով, լու-
մի գանակոծեր և դուրս հանելով են գլխիւրայ :

Յարգալի Պատրիարքարանն յարձակող ժողովուրդն
Սամաթիայի և Մշեցի էին. որոնք զՔաղաքական ժո-
ղովն հալածել կուզէին՝ նորա ազգապիտան ընթացքին
պատճառաւ. բայց որովհետեւ ժողովարանին դուռը գոյ
էր, զայն կը կոտորեն և ներս կըխուսէին : Ժողովականք
այս յարձակումն տեսնելով, Սամաթիայի քաղաքի տնո-
րեւութիւնները կը մոռնան, և իսկայն կը փախչին ամեն
մէկը մէկ կողմ : Ուստի բաղձութիւնն 'ի ժողովարան
մասնով կը կոխին իրարու հետ ծեծկուլել. վառելի Մշե-
ցիք մէկ կուսակցութեան կողմանէ և Սամաթիայիք միւս
հակառակ կուսակցութեան կողմանէ գրգռեալ 'ի Պատ-
րիարքարան կանչուած էին :

Օրագիրն՝ իւր թուոյն մէջ որ 'ի 2 Օգոստոսի հետեւ
եալ կերպիւ կը պատմէ այս ցաւալի կուլը՝ յաղթանակ
Սամաթիայեցոց վերագրելով :

«(Ժողովարանին մէջ) Սամաթիայիք և Մշեցիք՝ առա-
ջին պահանջողական և վերջինը յարձակողական դիմ-
քով կընեծկուին : Մշեցիք աթոռները կըսկսին խորա-
կել՝ աստից ոտքերը իբր զէնք գործածելու համար. ար-
դէն ալ ստորագրեցին քաջած՝ այս ու այն հարուածել
կուլին : Սակայն Մշեցիքն այնինչ ձեռքը վեր կը վերցնէ
զէմինին զարնելու համար, Սամաթիայիք ետեւէն ձեռ-
քը կը բռնեն ու կը զորոյն. այնպէս որ ալ Մշեցիք ծե-
ծելու մարդ չգտնելուն կըսկսին ապակիներն և ջուրի
ամանները կտորտել : Կտրել կէս ժամէ աւելի կըսկե-
ն՝ զկարող է զատնք զատել. վերջապէս Ս. Պատրիար-
քը կընէ ու անխօսի կըսկի ապակիներ, Մշեցիքները վար-
ընէ ուզելով : Մշեցիք վար չեն երթար, և նորէն կըսկի
կտրել մը անոր համար՝ որ Սամաթիայիք լսելով թէ Փա-
փազեան էֆէնտին արտաքնոյր պահուրտած է, կուլին
հոն յարձակիլ և Մշեցիք կարգիլն այդ յարձակումն.
որու միջոցին Խալիլաւարցի մը սաստիկ կընեծի Մշե-
ցիներէն և ձեռքերնուն կըխալի Սամաթիայեցոց վրայ
հասնելով :

«Անկի վերջը դուրս կընեն բոլոր եկեղեցականք և
կը յորդորեն զՍամաթիայիս որ վար իջնեն : Աստեք վար
կիջնեն ու մայր եկեղեցւոյ մէջն ու դուռը կը բացուին՝
յայտարարելով թէ՝ չափաի մեկին մինչև որ Քրիստոս-
տուր և Փափազեան էֆէնտինները դուրս չէլլեն. երկու
ժամէն աւելի կըսկե յայ. որ միջոցին և—500 Սամա-
թիայիք կը հաւաքուին, հետզհետէ շուկայէն իջնելով :

«Ս. Պատրիարքը նոյն միջոցին պատրիարքարանի մէջ
խոնեալ բաղձութեան մէջէն Սամաթիայիներն առիւթ
կանչելով կը յայտնէ անոնց թէ՝ պատասխանատուու-
թիւնն ինք իր վրայ առնելով, գործերնին իրենց խնդրա-
նայցը համեմատ պիտի կարգադրէ. ուստի համոզելով
կը յորդորէ որ հանդարտութիւն բաժնուելով տեղերնին
դառնան. և վերենք առ այն վստահացնելու համար Ս.
Պատրիարքն իրենց ներկայութեանը, փոխանորդ Հայ-
րը կը կանչէ և կը պատուիրէ իրեն՝ որ պէտք եղածը գրէ
Սամաթիայ ընտրողական ժողովոյն : Նշանակէ մի առ մի
Մշեցիքն ու Պատրիարքիցին ալ իւր ներկայութեանը
կանչելով գործերնուն կարգադրութիւնը իւր վրայ կառ-
նու և յորդորելով՝ խաղաղութեամբ տեղերնին դառ-
նալ կը պատուիրէ :

«Աստեք երթալն վերջը Սամաթիայիք դարձեալ չեն
բաժնուիր տեղերնէն, վերայգրեալ կերպ. ժողովարա-

նայ պատրիարքարանէն դուրս ելնելը աչօք տեսնելու յայտարարութեամբ : Ասոր վրայ Ս. Պատրիարքը գտած կիջնէ, ահա՛ ես եմ Փափագեան ու Քրիստոս տուր էֆէնոսին, հրամայեցէ՛ք երթա՛ք կըսէ ու մինչև դեղագործի խանութը կերթայ առջևնուն . ուր յանուն խորմեան (սրբազանի) կեցցէններով ու ծափահարութիւններով և յանուն Փափագեանի, Պաղարոսեանի և Էջը-ճիկեանի (որք Քաղաքական ժողովոյն անդամք էին) նախափնէքներ տեսնելով կըբռնուին :

«Չամոռնա՛ք յիշել թէ՛՝ ժողովականներէն ոմանք զաթիկէ կանչած են . բայց Փոխանորդ Ս. Հոյրը՝ «Ես իմ ազգս ոտկականութեան չեմ տար» . ըսած է : Ոմանք ալ ինչպէս է խորատանձեան էֆէնոսին՝ ժողովրդեան դէմն ելած են արիարար, ահա մեզ ծնեցէ՛ք ըսելով . բայց ոչ որ մազիւ չափ վնասած է ատոնց : Վերջապէս ահա 1873 Յուլիս 31ի յիշատիւթիւնն այսպէս կաւարտի պատրիարքարանի մէջ . իսկ դուրսը երկու կուռղ խովի պատրիարքարանէն բաժնուելէն վերջը՝ սրճարանին մէջ գիրար կըտեսնեն, ամենցը միմեանց ներելով և իրեն համարին եղբայր ձեռք ձեռքի տալով՝ եղածին վրայ ցաւ կըյայտենն անիծելով ամեն անոնք, որ այս ցաւալի դէպքին գրգռիչն և հեղինակն եղան» :

Ս. ՊԱՏՐԻԱՐԿԻՆ՝ ՀՐԱՄԱՐՈՒՄԸ

Այս վերնագրով հետեւեալ յօդ աւածը կըկարդամք Մաթի Յուլիսի 28 թուոյն մէջ :

Այս շաբթու Քաղաքական ժողովն երկու նիստ ըրաւ երեքշաբթի և հինգշաբթի օրերը, երկու ազմալից և խառնաշփոթ նիստ, որոց նմանն երբեք տեսնուած չէր Հայոց Պատրիարքարանին մէջ : Ազգային վարչութեան բարձրագոյն առեանը գոռում գոչումի, կուռղ և թնամանայ ասպարէզ դարձած, անհաճութիւն, պատկառանք խալառ անհետացած, մէկ խօսքով՝ ազգին ամենէն կարեւոր և կենսական գործերը անօրինելու վտանգ և նուիրական պաշտօնն ունեցող ժողովը՝ կուսակալական ոգւոյ, կրկն և հակառակութեանց բոյն եղած է : Երեքշաբթի օրը Սամաթիոյ եկեղեցւոյն խորհրդարանին մէջ ընտրողական ժողովոյ առնականութեն և անդամներին մին գիրար կուրելով (1) Սահմանադրութիւնը գործադրելու և նոր թողական խորհրդականներ ընտրել տալու դրադած միջոցին, յիշեալ ընտրողական ժողովոյն նախագահն և երկու անդամք ալ Քաղաքական ժողովոյ մէջ կուտի բռնուեր են Քրիստոստուր Էֆէնոսի հետ, ձայները բարձրացրել, նախատական խօսքեր եղել, Ս. Պատրիարքին յորդորանքներն ու սատարն անսկիւր և զեր, վերջապէս ետախմբիներուն միջամտութիւնն հայկ եղեր է :

Հինգշաբթի օրն ալ Պատրիարքի թաղականաց խնդրոյն առիթն Ս. Պատրիարքին և Քաղաքական ժողովականաց մէջ անհամաձայնութիւն մը ծագել է : Քաղաքական ժողովականք պահանջներ են, որ Ս. Պատրիարքը պաշտօնական ծանուցում մը դրկէ՝ լրագրաց՝ ազգարարելու թէ Պատրիարքի թաղական խորհրդէն հրաժարեալ Եղիա աղա Պէյլէրեանի քով եկեղեցւոյն 45000 դրուր Վար գործած ըլլալուն լուրը ստու է :

Ս. Պատրիարքը յանձն չէ առել ստոյգ և ծանուցեալ խորհրդէն մը ստու հանել . ասկէց վէճ ծագել է ժողովականներէն ոմանք ճնշում բանեցնել ուղիւ են Ս. Պատրիարքին վրայ, և անպատեհ ու անարգական կերպիւ վարուեր են վարչութեան գլխոյն հետ : Ասոր վրայ Ս. Պատրիարքին համբերութիւնը հատնելով՝ հրաժարելու յայտարարութիւն ըրել է . և լրաճնուս նայելով, հրաժարագիրը պատրաստել է երկու օրինակ, մէկն Ընդհանուր ժողովոյ ներկայացնելու, և միւսն ալ Բարձրագոյն Պրահն :

Սյս վախճանը քանի մ'ամսէ 'ի վեր կընախատեսէ թէ Ս. Պատրիարքին և Քաղաքական ժողովոյ մէջ անհամաձայնութեանց անջրպետը տակաւ կընդարձաւ : Իր ազգային վարչական գործերն օր քան զօր կըլլատ . Թարթիւն, և այնպիսի վիճակի մը կըհասնէին, որոյ առջև անտարբեր կենալ անհնարին էր :

Երեսփոխանական ժողովոյ պարտքն էր նկատողութեան տեսնել այս ծանր և սպառնալից վիճակը, և չառաւ . բայց Ս. Պատրիարքին հրաժարականը կամայապաշտ կ'սթափեցնէ զայն իր թմրութենէն, և իր պարտքը կատարելու հարկին մէջ կըլլէ :

Հետեւեալ երգն, որ 'ի Հնդկաստանէ յուզարկուած է մեզ Եջըլ-այ մէջ հրատարակելոյ ինդրանօք, 'անշուշտ դժուարեմաց և դուցէ՛

անհաճոյ պիտի երեւի թուրքաստանի մեր ընթերցողաց : Սակայն ոչ սակաւ հետաքրքրական կըհամարուի իրբն ցոյց մի նոյն երկրին Հայոց աշխարհիկ լեզուին : Ռաշիմ և խոհական գրագէտք զայս կարգաւոր, կրնան դադարաւ մի ունենալ Հայերէն աշխարհիկ լեզուին անկանախութեանն և պէսպիսութեանը վերայ . հետեւաբար եթէ մեզ դժուարեմաց է Հնդկաստանի կամ Նորվուդայու աշխարհիկ լեզուն, մերինն ևս ոչ նուազ դժուարեմաց և դուցէ՛ անհաճոյ է նոցա : Արդ այս Լարիւրինթոսէն աղատելու համար ուրիշ ճար չկայ, բայց միայն իւրաքանչիւր Հայաբնակ երկիր աշխատելու է զիւր աշխարհիկ լեզուն սակաւ առ անկաւ մծաեցնել դարաւս լեզուին և նորա քերականական կանոնացն հետեւիլ կարելի եղածին չափ :

ԵՐԳ ՍԻՐԱՆԱՐԻ

1. Նախիջն ոտդ որ վեր դիր, խելքս գլխէս տուր գնացիր . Անծանօթիդ ինչ փոյթ որ ինձ ճանաչիր, Տէս բոլոր ունեցածս զո՛ք ամ արեւ խեղճ ամ, ինձ խնայիր :
2. Մազերդ բոյլ բոյլ ոտիդ ունգ՝ ֆրֆրմանայ մուշկ(1) բատիլ, Եւ հատով վարդից բուր բորմանայ . Աչքերս բաց՝ լոյս քաղվից, ականելով քոռացոյ, ինձ ևս հոտաւորեա՛, որ միտքս և սիրտս առողջանայ :
3. Գլուխդ նման այ անգին մարգարտի, Արժէքն ո՛չ թագաւորք, և ոչ գանձք անթուելի . Յարգի աս վեհ թագուհեաց . և հրաշք աշխարհի, Սի՛ մոռանալ թէ և չեմ համմատ և ո՛չ արժանի :
4. Հակառուք մի՛նով լոյս առաւրձն, ում որ ասի մեղսայ լալման, Ոսկի երծաթ բան չիգորման, Ֆիլք և ցաւն ինձ այ նման :
5. Յունքերիդ ձեն ումնօ՛ք քաշեմ, Ես մին հողի ջուր յերբ մաշեմ . Չանկալ գճեմ սիրտս քարշեմ, Քարի նման չարիսով տաշեմ :
6. Աչքերիդ շատ մայլեցի, ոմանց ակունք պարգեւեցի . Բան և գործ միջոց թողի, միտքս այն էր որ քեզ առնի :
7. Քինթիդ գողեմ ընչուր նման՝ երկու չէ՛մ այ աղբւր բխման, Ծարաւ մարդի սիրտ այ դողման, Գերուս ասա, նուստտ տս գողման :
8. Պոնջներդ յորժամ կարաւ ումայ, Չկարիս ձերն տապաւորմայ . Բլուրն վարդէն սպաղաւորմայ, ինձ պէս խորին բորբորմայ :

ԶԱՆՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԵՂԵՍԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի ԶՄԻՌՆԻԱ

Անցեալ ամսոյ 30ին երկուշաբթի առաւօտուն Եղեւեան Յօհաննէս եպիսկոպոսն իբրեւ Պատրիարքական առժամանակեայ տեղապահ հասաւ 'ի քաղաքս Կ. Պօլիսէն գալով : Նորին Գերապատուութիւնն 'ի շոգեհաւէն արժանաւոր յարգանք ընդունուեցաւ ազգային երեսիկներէն . բայց ինքն նոյնիսկ հասած օրն՝ ընդդէմ պատշաճից ամենապարզ օրինաց, գիշերային ճերմակ պատմա հագուստով և գլխիցաց ընկալաւ զմեծաշուք սյցեղուս իւր . . . : Այս սկզբնական ոչ քաղաքաւար ընթացքն որ դուցէ՛ անհաւատալի պիտի երեւի բազմաց, անոր համար հարկ համալրեցինք յիշատակել, որպէսզի մեր ընթերցողք դիւրաւ հասկանան թէ Նորին Գերապատուութեան ազգային պաշտօնական միւս գործքերն ևս իւր այս ձախորդ ընթացքէն աւերել չէին կրնար ընել :

Գերա . Եղեւեան եպիսկոպոսն, որ հաշտաբար և խաղաղաբար առժամանակեայ հոգեւոր պաշտօնիւ մը յուզարկուած է առ մեզ, փոխանակ երկպառակեալ երկու կուսակցութիւններն խոհեմաբար հարցաքննելու, նոցա յառաջ բերած իրաւանց հայրաբար ականջ էսխելու, և վերջապէս փոխանակ՝ պատուաւոր, բանիւրուն

(1) Մեր աշխարհում կոգեմք բառի մաշկ, որ շատ անուշամոտ եւ ջրնաղ ծաղիկ այ :

և չէզոք անձինքներէ իրեն տրուած խրատուց, ազգարարութեանց և նոյնիսկ ազգասիրական աղաչանաց ուշագրութիւն մատուցանելու, առանց դոնէ անգամ մի յատենի եկեղեցւոյն հայրական բարեյորդոր խրատներ քարոզելու և զժողովուրդն 'ի քրիստոնէականեւ սէր և 'ի միարանութիւն հրաւիրելու, Եղեւեան եպիսկոպոսն կըսեմք, ևս առաւել գրգռեց և զայրացոյց զհասարակութիւնն իւր քովը դնացողներուն հետ խախ վարուելով և յայտնապէս զրուցելով թէ ինքն յատուկ հրահանգներ ունի յազգային կեդրոնական վարչութեան հաստատուն պահել և պաշտպանել տեղական կառավարութեան տույն զլուծեալ ազգային քաղաքական ժողովն . հետեւաբար ամենեւին պէտք չունի համոզիլ խօսքերէ : Եւ նշանակութեան արժանի է, որ կեդրոնական վարչութիւն ասելով, կարծեմք թէ կիմանար զփախազեան պարոն Ստեփան և զպարոն Գրիգորիստուր Դաղարոսեան : Գերա . Եղեւեանն՝ այս կեբալու, ժողովրդեան և ազգային երեսիկաց պատիւը ոտքի տակ աննէլէ ետեւ, ընդդէմ կամաց ժողովրդեան խիստ մեծագոյն մասին՝ անհամբերութեք փութացաւ և փորձ փորձեց քայքայեալ և լուծեալ երեսփոխանական ժողովոյն քանի մը անդամներն դուռնարել յերրորդ ումն ամսոյս ուրբաթ օրը յազգային Առաջնորդարանն 'ի լուծել ազգապատկան քանի մը ծանրակշիռ խնդիրներ . . . : Բայց չյաջողեցաւ . քանզի իզմիրը ոչ Ամասիա է և ոչ Մարդուան, այլ քաղաքակրթեալ և կէս—եւրոպական երկիր մի . Չյաջողեցաւ ըսինք . վասնզի մեր վեմա . վալի փաշային հրամանաւ և տեղւոյն Հայոց մեծամասնութեամբ նորոգ հաստատեալ ազգային ցանձնաժողովոյն անդամոց շատերն ընկերութեամբ ուրիշ պատուաւոր անձանց և էանաֆներուն գլխաւորաց նոյն օրն կէսօրէն յառաջ առժամանակեայ տեղապահ եպիսկոպոսին քովը գնացին և քաղցրութեամբ ծանուցին նմա զաւօրինաւորութիւնն նախորդ քաղաքական և երեսփոխանական ժողովոց և զհարկաւորութիւնն նորոգութեան նոյնին՝ ըստ տրամադրութեանց Սահմանադրութեան . հետեւաբար պէտք է, ըսին, ժողովոյն այսօրուան պակասաւոր գումարումը ետ թողուլ : Բայց երբ տեսան թէ նա՛ իւր կամակոր որոշմանը վերայ հաստատուն կըմնայ և քաղցրութեամբ չուղեր համոզուիլ, յայնժամ իմացուցին իրեն թէ՛ Ազգին կողմանէ պաշտօնապէս եկած են ժողովականաց սրահներն գոցելու ու զինքն դուրս հանելու : Եւ իրօք սրահները բոլորեցին և զնորին Գերապատուութիւնն ամենայն քաղաքավարութեամբ Առաջնորդարանին մէկ խուցը բնակեցուցին իբրեւ հասարակ անպաշտօն եպիսկոպոս մի, մինչև ցվերադարձ իւր 'ի Կ. Պօլիս : Բարեբաղդաբար միայն այս պարագայիս մէջ խոհեմութիւն բանեցնելով ընդդիմանալու փորձ չէորձեց . ուստի 'ի փոխարէն՝ ազգային պատգամաւորութիւնն երեսկոյն ուշ ժամանակ հաճեցաւ մարդասիրաբար վերադարձնել յիշեալ եպիսկոպոսին դրանալիքը մեծ սրահին, ուսկից կերթուի իւր անկողնոյ սենեակը, որպէսզի կարող ընի հանգստանալ իւր գեղեցիկ քարեօջային մէջ :

Ահա այս է իզմիրի մէջ պատահած ազգային եղելութեանց ճիշտ նկարագիրը : Եղելութիւնք, որոց վերայ թէեւ կըյաւիւր, բայց յանցանքն Կ. Պօլսոյ հալածեալ քաղաքական ժողովոյն է, որ 'ի վնաս պատուոյ ազգայնոց Զմիւռնիոյ անպատեհ և հակասահմանադրական հրահանգներ տալով, այսպիսի անխոհեմ և կամակոր եպիսկոպոս մի յուզարկեց մեզ . որոյ դէմ՝ դարձեալ ոչ սակաւ քաղաքավարութեամբ վարուեցաւ իզմիրի Հայ հասարակութիւնն . քանզի ինչպէս ընթերցողք կըտեսնեն, Յուլիսի 31ին Կ. Պօլսոյ Պատրիարքարանին մէջ պատահած ծանր անկարգութիւններէն և ոչ մէկն տեղի ունեցաւ մեր ազգային Առաջնորդարանին մէջ :

Լրագոյս նախընթաց թուով խոստացանք շարունակել մեր տեղեկութիւններն քաղաքիս նորահաստատ Ուսումնասիր Ընկերութեան վրայօք . որոյ նպատակն երեւ

կոյնան ծրի դաստառութիւն է վասն կարօտ ազգայնոց ։
Պատարանը՝ որ Վասպուրական թատրոնին մէջն է , ա-
մեն գիշեր՝ շարաք է կիրակի գիշերներէ 'ի դատ, բաց է
և ըստ Գրանկայ Ժամը 8 1/2-ն մինչև 11 դաստառու-
թիւն կըլինի հայերէնի , գաղղիարէնի և թուրքերէնի ։

Ուսումնասիր ընկերութեան անդամքն են պարոնայք
Թարութիւն Կ. Հիւսնեան , ատենապետ ,
Ա. Ղուկաս Պ. Բարազեան , ատենադպիր ,
Յակոբ Կ. Հիւսնեան , փոխ-ատենադպիր ,
Քոյճանեկ Կ. Մանասեան , արկղապետ ,
Պալուստ Պ. Բարազեան , գործակալատար ,
Մանուկ Թ. Վարդապետեան ,
Կարապետ Գ. Վէլիպաշեան ։

Լսածնուս նայելով քաղաքիս ազգային էսնաֆ-
ներէն բազմաթիւ ստորագրութեամբք 5-6
բողոքադիր մատուցուել է Պատրիարքական
փոխանորդ գերա . Եղեանեան եպիսկոպոսին՝
իրենց ընտրողական իրաւանց դարձադրութիւնը
պահանջելով : Իրաւունք , որք 'ի գործ չբերուե-
ցան , կրօն , նախորդ երեսփոխանական Ժո-
ղովոյն ընտրութեան Ժամանակը : Քանզի մին-
չև ցայսօր իզմիրի մէջ պէտէլիէի՝ այսինքն զին-
ւորագրութեան փոխարէն արող վերայ հաստա-
տեալէր ընտրող լինելու իրաւունքը , և առ-
նուազն 75 զուրուշ պէտէլիէի տուրք վճարողն
ընտրութեան իրաւունք ունէր : Վերայդրեալ
էսնաֆներն՝ այժմ կըբողոքեն այս գրութեան
դէմ , և կըհաստատեն թէ իրենցմէ իւրաքան-
չիւրն 75 զուրուշն շատ աւելի ազգային ուրիշ
տուրք կըվճարեն : Հետեւաբար մեք ևս իրա-
ւունք ունինք , կրօն , ընտրողք լինելու ըստ
սահմանադրութեան ։

Կըրեմք թէ Եղեանեան սրբազանն՝ վերջապէս
համոզուելու և օրինաւոր դուրս է գլխորդիչեալ
բողոքներն և խոստացել է բողոքարկուաց իրա-
ւունք 'ի գործ դնել տալ ։

Կ. Պօլոյ Լը Ֆօր Գէ-Պօֆօր գաղղիարէն լրա-
գրոյն մէջ հետեւեալը կըկարդամք .

Երէկ Գրիգորեան Հայոց (Լուսաւորչական
Հայոց ըսել կուզէ) պատրիարքարանի սրահներն
լեցուն էին խուռն բաղմունքեամբ . ուր սրբա-
զան Պատրիարքը իւր հրաժեշտին գրուածքը
կարդաց , որուն խիստ մեծ ուշադրութիւն մա-
տուցաւ : Երկու խառն յանձնաժողովք կարգե-
ցան ընենելու համար՝ 'ի Նորին Սրբազնութեան
նշանակեալ յօգուածներն , զորս իւր գրուա-
ծոյն մէջ անկարելի դատած է 'ի գործ դնել
առանց մեղանշելու իւր պաշտօնին օրինաւոր և
արդար սկզբանցը դէմ ։

«Չորս հարիւր ստորագրութեամբք աղիբա-
գիր մի կըլինդ ընէ՝ որ փաղաքական Ժողովոյն
անդամներէն պարոն Քրիստոստուր և պարոն
Ստեփան ֆաֆաղեան իրենց պաշտօնէն հանուին
նմանապէս Մատթէոս վարդապետը իւր պաշ-
տօնէն զրկուի . որովհետեւ ասանք եղան պատ-
ճառ ցաւալի երկրպառակութեանց և խռովիչք
բարոյական բարեկարգութեանն : Ընդհանրա-
պէս կըկարծուի թէ յիշեալ աղերսագիրը նկա-
տողութեան պիտի առնուի՝»

ԶԱՆԱԶԱՆ ԷՈՒՐԵՐ

Զմիռնիա 11 , Օգոստոս ։

Մեր միջնաբերդը ըստ կարի զովացաւ և աշ-
նանային գեղեցիկ օգերը գրեթէ սկսան : Հո-
րիդոնը երբեմն անձրեալներ անդերով կըգոց-
ուի . և կըլինէր թէ քաղաքիս շրջականներն
փոքրիկ անձրեւներ եկիր են ։

—Վսեմա . Սիւրէյա վաշային տնօրէնութիւն
Ղասապայի և Ալաբքի երկրորդ օգիւց կայսերա-
կան գործակալ մեծաշուք Էտիպ Էֆէնտին՝ իզ-
միրի քաղաքապետական (պէլէտիէ) Յանձնաժո-
ղովոյն նախագահ անուանեցաւ 'ի մեծ գոհու-
նակութիւն հաւարակութեան . որ կըյուսայ թէ
նոր նախագահին խնամքն քաղաքիս պիտի
մաքրուի և պիտի որպէս անայ ըստ կարի ։

—Աւարոհանդարիոյ օգու . կայսեր՝ Ֆրան-
չիսկոս Յովսէփ Առաջնոյն ծննդեան սարեղար-
ձին տօնախմբութիւնն՝ երկուշարթի օրը սովո-
րական հանգիսիս կատարուեցաւ յընդհանուր

հիւպատոսարանն յիշեալ տէրութեան ։

—Անցեալ շաբաթ գիշեր Բունթայի թաղին
մօտ գողերն ծխախոտի խանութ մի բանալով՝
անոր մէջէն 200 լիւա վերուցին . զոր խանութ-
պանը քարի մը ներքեւ պահած էր ։

—Փոլէրան գեղարդարար , կըյառաջդիմէ
Աւստրիոյ , Գերմանիոյ , Իտալիոյ և Րումէլիի
մէջ : Իզմիրի առողջապահ տեսչութիւնն հար-
կաւոր տնօրէնութիւններն 'ի գործ դրաւ , որ-
պէսզի յիշեալ կողմերէն հասած նաւերն զգու-
շութեան օրինաց ներքեւ դուրսն ։

—Մեծարգոյ իլիա Գիւլիէնի օղլու յոյն երե-
ւի վաճառականն չորեքշաբթի օրը՝ զինի կար-
ճատեւ հիւանդութեան մը , առ Աստուած փո-
խեցաւ : Հանգուցեալը՝ որ ամուրի էր , առատ
օչնութիւններ կընէր միշտ իւր ազգային բա-
րեպաշտական հաստատութեանց քաղաքիս և
կըհաստատեն թէ կտակաւ ևս մեծ գումար
թողուցած է 'ի նպատակ Յունաց հիւանդանոցին ։

—Բարձրադասիւ Խրտիշէ անցեալ ամսոյ 30-
ին իւր սեփական Մասր կոչուած դեղեցիկ շո-
գենաւով մեկնեցաւ 'ի Կ. Պօլոյ՝ յԱլէքսան-
դրիա վերադառնալու համար ։

Նորին Բարձրութիւնն 'ի յիշեալ մայրաքաղաքն
գտնուած Ժամանակը՝ ըստ աւաշարկութեան
վսեմա . Նուպար վաշային , պէյուլթեան աստի-
ճան շնորհեց մեծաշուք Տիգրան Էֆէնտին , որ
Ապրօեան հանգուցեալ Ստեփան աղային որդին
է : Ապրօեան Տիգրան պէյը՝ որ Եգիպտոսի ար-
տաքին գործոց պաշտօնատան մէջ վսեմա . Նու-
պար վաշային խորհրդոյ քարտուղարն է , ի
շնորհօք , ուշիմ և ազնիւ երիտասարդ մըն է ։

—Օգոստոսիաւ Սուլթանն հաճեցաւ Մէճիտիէ
կարգին առաջին աստիճանի շքանշանաւ պատ-
ուել զվսեմա . Համիտ վաշան , որ եկամտից
պաշտօնեայ է ։

—Տատեան վսեմա . Յարութիւն պէյն , որ
Հանքաց և անտառաց վերատեսուչ էր , կայսե-
րական հրամանաւ նախագահ անուանեցաւ վե-
ցերորդ շրջանակի քաղաքապետութեան խոր-
հրդոյն՝ վսեմա . Գատրի պէյն տեղը : Իսկ Հան-
քաց և անտառաց վերատեսուչութիւնն վսեմա .
Էուսուֆ պէյն յանձնուեցաւ , որ հասարակաց
շինութեանց պաշտօնատան միւլթէշար էր ։

—Հաստատուն աղբիւրէ մը կիմանամք թէ
Եգիպտոսի դատաստանական՝ բարեկարգու-
թիւն արդէն ընդունուելու են Անգղիայէն , Իտա-
լիայէն , Գերմանիայէն , Հելլապայէն , Շվեդէն ,
Նորվեգիայէն , Հոլանտայէն և Պէլճիգայէն .
ուստի կըմնան այժմ Ռուսիան , Աւստրոհունգա-
րիան և Գաղղիան . որոնք տակաւին իրենց գրա-
ւոր հաւանութիւնն տուած չեն յիշեալ դա-
տաստանական նոր բարեկարգութեանց : Սա-
կայն տարակոյս չկայ թէ այս տէրութիւններն
ևս պիտի չուշանան բարձրա . Խրտիշէն այս բա-
րեպաշտակ տնօրէնութիւնն ընդունելու ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Աֆիօնին գիւնըը հաստատուն են և վաճառե-
ցաւ Գառահիւարինը՝ 205 զուրուշի չէքին , Պօ-
ղատընինը՝ 217-215-ի և հաւաքակ աֆիօնը 200-ի
Բանդակը հանդարտութեան մէջ կըգնանուի .
մեքենայով մաքրուած բամբակին գինը՝ 430
զուրուշ է կենդիւնարը և Ատանայինը՝ 360 ։

Բէօքայայէն 100 քուրձ Պալքերի հասարակ
ապրանք վաճառեցաւ 215-ի կենդիւնարը ։

Ոշխարի բուրդը իջնելու վերայ է և 250 կեն-
դիւնար անըւայ ապրանք վաճառեցաւ 340-ի ։

Փայլամուտը հանդարտութեան մէջ կը տնուի .
Չոր թուրք ըստ տեսակին 110 զուրուշէն
մինչև 210 զուրուշի կըծախուի կենդիւնարը ։

ԾԱՆՈԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՏԿԱՑՆԱԼ
ԱՆԳԴԻԱԿԱՆ ԴՊՐՈՑ Ի ՉՄԻՒՆԻԱ
English Commercial School.

Արձակուրդը (վարան) Սեպտեմբերի 9-ն ըստ նոր
տուժարի երեքշաբթի ըննալով , նոյն օրը դաստառու-
թիւններն պիտի սկսին . իսկ թուականոր աշակերտ-
ներն երկուշաբթի օրէն պիտի ընդունուին ։

Այս գաղղիոյն տնօրէն միտար Պէրքշոյր կըծանուցու-
նէ հասարակութեան թէ , իւր վարժարանին տեղը բա-
ւականապէս մեծցուցած և սննդաներն աւելցուցան
լինելով , կարող է այժմ անցեալ տարուանէ աւելի թո-
շակուոր աշակերտներ ընդունիլ ։

Դաս տրուած ընդուններն են անգղիարէն , գաղղիարէն
հայերէն , գերմաներէն և յունարէն , իսկ գաղղիոյն մէջ
խօսուած ընդուններն միայն անգղիարէնը և գաղղիարէնը
են : Թուրքերէնի դաստառութիւն մի ևս պիտի հա-
տատուի : Բաց 'ի գիտութեանց և 'ի մաթէմատիքային
մեծ ու յասուկ ուշադրութիւն կըմատուցուի թուաքա-
նութեան , տուժարակալութեան՝ որ է կրկնատուժար
վաճառականութեան , և առեւտրական նամակագրու-
թեան : Վերջապէս յիշեալ գաղղիոյն տնօրէնն իւր անձն
հիշն պիտի թափէ , որպէսզի բարեք կարգապահու-
թեամբ , ընտանեկան կենցաղավարութեամբ և աշխա-
տութեամբ , արժանի լինի վստահութեանն , որ մինչև
ցայսօր ցոյց տրուեցաւ իրեն ։

ՄԻԹԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ Ի ՉՄԻՒՆԻԱ

Կըբացուի 'ի 10 Սեպտ . ըստ նոր տուժարի .

Վարժարանը բոլակաւոր , կիսաբոլակ ու արտա-
քին աշակերտներ կընդունի ։

Աս վարժարանիս մեջ հետեւեալ լեզուները ու գի-
տաքիւններն կըսորվեցուին . Հայ լեզու , ու մատենա-
գրութիւն , տաճկերէն , գաղղիերէն , գերմաներէն ,
իտալերէն , յունարէն , անգղիարէն , ճարտասանու-
թիւն , ուսողութիւն (քուաբանութիւն , ալեկարա-
երկրագիտութիւն) , աշխարհագրութիւն , ընդհանուր
պատմութիւն , բնական պատմութիւն (կենդանաբա-
նութիւն , տնկաբանութիւն , հանքաբանութիւն) երկ-
րախօսութիւն , բնագիտութիւն (Ֆիզիկա) , կրկնատու-
մար հաշուականութիւն , առեւտրական հարկաւոր
նախաձանօրութիւնք գեղագրութիւն գծագրութիւն ։

Անգրագոյն գիտելեաց համար վարժարանին տես-
չութեանը դիմելու է , փողոց Եհնի մանալիէ թիւ 89 ։

ՊՐԱԺԼՈՆ ԴԵՐԱԿՈՄՍ

Աղեքսանդր Տիմայի այս պատուական վեպին երկ-
րորդ հատորն եւս բարգմանութեամբ Մ. Մամուրեան
պատուելիին 'ի յոյս ընծայեցաւ 'ի տպարանի Տեա-
եան եւ բաղկացեալ է ութածալ 237 էրեսներէ ։

ԻՎԱՆՕԻ

Վ. օլքր Սթօք անուանի վիպասանին այս աշխատա-
սիրութեան երրորդ եւ վերջին հատորն , որոյ բար-
մանիցն պատուելի Մ. Մամուրեան գրագետն է 'ի
յոյս ընծայուեցաւ 'ի վերոյիշեալ տպարանի . ուր
կըվաճառի : Խրաքանչիւր հատորին գինը 12 դրոշ է ։

ԳԱՐՈՒՍ ՄԷԿ ԶԱՒԱԿԻՆ

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ

Ալեքսեւ տըՄիսեկ գաղղիացի երեսիլի բանաստեղծին
այս գործոյն երկրորդ ու վերջին հատորն՝ որ բաղ-
կացեալ է յոթածալ 135 էրեսաց , եւ որոյ բարգմա-
նիցն է Գրիգոր Չիլիկիլեան պատուելին , այս շաբ-
թու հրատարակեցաւ 'ի Տեաեան տպարանի : Եր-
կուց հատորաց գինը 20 դրոշու է ։

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Այս լրագիրը երկու շաբաթը անդամ մը՝ շաբաթ օրը
կըհրատարակուի : Տարեկան գինը 120 զուրուշ է ող-
ղրամով , կանխիկ վճարով : Դուրս երթալու լրագրաց
ճանապարհի ծախքը՝ առնողին վերայ է : Ո՛վ որ կուզէ
կրնայ բաժանորդ գրուիլ Զմիւռնիա՝ Աշխարհայ գրա-
տունը . իսկ ուրիշ քաղաքաց համար , ահա կընշանակեմք
լրարոյս մեծարգոյ գործակալաց անուանքը , որք են .

Կոստանդնուպոլիս՝ Յովսէփ Էֆէնտի Գալաֆեան
Չաքմաքըլար Եօրուշու թիւ 16 ։

Ալէքսանդրիա՝ աղա Միքայիլ Հայկապան ։

Գազիլէ՝ Իսկէնտէր աղա Մեկիլեան ։

Զոպպէ՝ աղա Սիմօն Ս. Սուրբատեան ։

Բէշլէրսպարէկ՝ Գալաֆեան տարկաւոր խանթարճեան
Հայկա՝ Յօհաննէս աղա Ս. Գիւրքանեան ։

Պադուա՝ Անգղիոյ հիւպատոսի փոխանորդ , աղ
Միքայիլ մահտեօ Սիմատեան ։

Կալիֆթա պարոն Մ. Խ . Յովակիմեան .

Մատրաս՝ պարոն Անդրէաս Սամ ։

Պադուա՝ պարոն Մանուկ Որդանեան ։

Խմբագիր—տէր Լրագրոյս .

Գ. Լ. Գ. Պաշտապետ ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՅՑ ԱՐԱՐԱՏՆԱՆ